# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2024 թվականի N 18-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 62-րդ և 63-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-9, դեմ- 0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է.***

Հաստատել Տաթև համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 10-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2021-2026 թթ հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին » 15-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» 05-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի ընթացքի մասին

4. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀՍյունիքի մարզի Տաթևհամայնքի Շինուհայր ևխոտ բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու, հողամասերի

նպատակային նշանակությունը փոխելու և հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ բնակավայրում դպրոցական շենքի կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին

6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու հերթական նիստի օրը, ժամը որոշելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2024 թվականի N 19-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2021-2026 ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 8-րդ մասով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.4 հոդվածի 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2021-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին » թիվ 15-Ա որոշման 1-ին կետի «հավելվածի» բառի «ի» տառը հանել և հավելված բառից հետո ավելացնել «1-ի և 2-ի» թվերը, գծերը և տառերը:

2. Թիվ 1 հավելվածի մեջ հավելված բառից հետո ավելացնել «1» թիվը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՌՈՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2024 թվականի N 20-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 05-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82.1-րդ հոդվածի 3-րդ մասով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.4 հոդվածի 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին » թիվ 05-Ա որոշման 1-ին կետի «հավելվածի» բառի «ի» տառը հանել և հավելված բառից հետո ավելացնել «1-ի և 2-ի» թվերը, գծերը և տառերը:

2.Թիվ 1 հավելվածի մեջ հավելված բառից հետո ավելացնել «1» թիվը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2024 թվականի N 21-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով, որոշման նախագծի՝ կողմ - 9, դեմ-0, ձեռնպահ -0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի հաղորդումը Տաթև համայնքի բյուջեի 2024 թվականի առաջին եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հավելվածների:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

*Տաթև համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումների որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը կատարելու համար: Տաթև համայնքի 2024 թվականի առաջին եռամսյակի վարչական բյուջեի եկամտային մասով պլանավորված 83022.0 հազար դրամի դիմաց (այդ թվում սեփական եկամուտ՝ 19968.0 հազար ՀՀ դրամ) փաստացի եկամուտը կազմել է 73927.681 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ եռամսյակի կտրվածքով կատարվել է 89.05 %-ով. այդ թվում սեփական եկամուտ՝ 10738.181 հազար ՀՀ դրամ,կամ 53.78%): (տես հավված 1):*

### *Հ ա ր կ ե ր և տ ու ր ք ե ր.*

Այսպիսով հարկային եկամուտների և տուրքերի մասով 2024 թվականի առաջին եռամսյակի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 6321.765.հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 11388.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 55.51 % այդ թվում՝

*-անշարժ գույքի հարկի գծով փաստացի կատարողականը կազմել է 1276.053 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 4758.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 26.82 %:*

*-գույքային հարկեր այլ գույքից (գույքահարկ փոխադրամիջոցների համար) փաստացի մուտքերը կազմել են 4858.012 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 6201.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 78.34 %:*

*- տեղական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 187.7 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 429.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 43.75 %:*

### *Պաշտոնական դրամաշնորհներ*

*Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 113473.196 հազար դրամ, նախատեսված (ճշտված) 113473.196 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100 %-ով, որից՝*

*-Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով փաստացի մուտքերը ֆինանսավորվել են ամբողջությամբ և կազմել են 63054.9 հազար դրամ,*

*- Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ ) մասով փաստացի մուտքերը ֆինանսավորվել են ամբողջությամբ և կազմել են 50418.296 հազար դրամ:*

Գույքի վարձակալությունից եկամուտների գծով նախատեսված 4080.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 2529.816 հազար դրամ, կատարողականը կազմել է 62.01%, այդ թվում՝
համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարներ՝պլանավորված 1674.0 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 682.916 հազար դրամ, կամ 40.8 %
հողամասերի կառուցապատման իրավունքի վարձավճարների մասով պլանավորված 708.0 հազար ՀՀ դրամի դիմաց կատարողակը կազմել է 605.0 հազար ՀՀ դրամ, կամ 85.45 %
այլ գույքի վարձակալությունից մուտքեր պլանավորված 1698.0 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 1241.9 հազար դրամ, կամ 73.14 %:
Վարչական գանձումներից ստացվող միջոցներից, (որը իր մեջ ներառում է աղբահանության վճարը,համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության ծնողական վճարները, ՀՀ վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքեր շինությունների օրինականացման վճարը) նախատեսված 3600"0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 1616.6 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 44.91 %-ով:
Տույժերից,տուգանքներից եկամուտների գծով նախատեսված 750.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 0 դրամ:
Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտները կազմել են՝ 270.0 հազար ՀՀ դրամ, պլանավորած 150.0 հազար դրամի դիմաց, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 180 %-ով

**Ծախսերի գծով կատարողականը ունի հետևյալ տեսքը .**

Հաշվետու ժամանակաշրջանում վարչական բյուջեի ծախսային մասով նախատեսած 90091.761 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 59739.451 հազար դրամ, այն կատարվել է 66.31 % -ով (տես հավված 2, 5 ), ֆոնդային բյուջեով նախատեսված 32353.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 2871.6, կամ այն կատարվել է 8.9 %-ով:
Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում հատվածին պլանավորված 42241.761 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 27379.852 հազար դրամ, կամ 64.82 % :
Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին պլանավորված 6000.0 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 508.550 հազար դրամ, կամ 8.48 % :
Տնտեսական հարաբերությունների գծով գյուղատնտեսություն ծրագրով պլանավորված 19000.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 13102.584 հազար դրամ, կամ 68.96 % :
Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար պլանավորված 850.0 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 0 ՀՀ դրամ :
Նախադպրոցական հիմնարկների պահպանման համար պլանավորված 14600.0 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 13500.302 հազար դրամ, կամ 92.47 %, , իսկ արտադպրոցական դաստիարակության հիմնարկների պահպանման համար պլանավորված 6000.0 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 4648.133 հազար դրամ, կամ 77.47 %:
Սոցիալական պաշտպանություն ոլորտին՝ (սոցիալական աջակցություն բնակչությանը)

*Տաթև համայնքի 2024 թվականի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողական նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:*

*Տաթև համայնքի 2024 թվականի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողական նախագծի ընդունման կապակցությամբ Տաթև համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:*

*Գլխավոր մասնագետ* *Արթուր Հովակիմյան*

16.04.2024 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

10 մայիսի 2024 թվականի N 22-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՆՈՒՀԱՅՐ ԵՎ ԽՈՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդկետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ և 66-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման և հաշվի առնելով Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 7-ի 27 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ -8, դեմ-1, ձեռնպահ- 0, ավագանին որոշում է.

1. ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր և Խոտ բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում կատարել փոփոխություն և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության 220 ԿՎ լարման «Որոտան-1» էլեկտրահաղորդման օդային գծի հենարանների տեղակայման նպատակով, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության վարելահողերից 0.00922 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-073-0113-0001-հց), այլ հողատեսքերից 0.01232 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-047-0104-0096-հց) փոխադրել «էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի» կատեգորիա «էներգետիկայի օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքերի նկատմամբ որպես՝ «էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի» կատեգորիա «էներգետիկայի օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ պետական գրանցում ստանալուց հետո՝ 0.00922 հեկտար և 0.01232 հեկտար հողամասերը համապատասխանաբար՝ 47464.6(քառասունյոթ հազար չորս հարյուր վաթսունչորս ամբողջ վեց տասնորդական) ՀՀ դրամով և 41469.1(քառասունմեկ հազար չորս հարյուր վաթսունինը ամբողջ մեկ տասնորդական) ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությանը:

3. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2024 թվականի N 23-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման 28-րդ կետը, հիմք ընդունելով Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ բնակավայրում 2024 թվականի ապրիլի 22-ին տեղի ունեցած՝ «Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող դպրոցի նոր շենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումների» արձանագրությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ- 9, դեմ- 0, ձեռնպահ- 0, ավագանին ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ բնակավայրում դպրոցական շենքի կառուցման աշխատանքներին.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2024 թվականի N 24-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ, ԺԱՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով Տաթև համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ- 9, դեմ-0 , ձեռնպահ-0, ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2024 թվականի մայիսի 31-ին, ժամը՝ 15.00 -ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ